ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ

2025 թվականի փետրվարի 19-ին Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 20-ի թիվ 0129-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստ՝ մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակում ստացված առաջարկների նախնական գնահատման և ծրագրին համապատասխան առաջարկների քվեարկության փուլ տեղափոխման վերաբերյալ:

Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջաակներում սահմանված ժամկետում ստացվել է թվով 8 ծրագրային առաջարկ, որոնցից 3-ը, նախնական գնահատման արդյունքում, համապատասխանելով գործընթացի չափանիշներին, տեղափոխվեցին քվեարկության փուլ.

1.Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում ֆուտբոլի դաշտի կառուցում:

2.Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում ֆուտբոլի դաշտի կառուցում:

3.Արմավիր համայնքի Նորավան գյուղում ֆուտբոլի դաշտի կառուցում:

Ծրագրային առաջարկներից 5-ը՝ թափառող շների կացարանի կառուցում, էլեկտրական շարժիչով մինի ավտոբուսների ձեռքբերում, անվճար Wifi ցանցի կառուցում քաղաքի կենտրոնական փողոցներում, այգիներում, ավտոկայանում, հասարակական տրանսպորտում և այլ տարածքներում, Մայիսյան գյուղից Արմավիր քաղաք տանող ճանապարհի հիմնանորոգում և Արմավիր քաղաքի գերեզմանատնից Մայիսյան գյուղ տանող ճանապարհի հիմնանորոգում, չտեղափոխվեցին քվեարկության փուլ ՝ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու հիմքով, որոնց վերաբերյալ առցանց ծանուցվել են առաջարկները ներկայացնող բնակիչներին:

Հանձնաժողովի նախագահ Ֆելիքս Պետրոսյան

Քարտուղար Նոյեմի Խաչատրյան